

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 13/4

18 մարտի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Սոնա Հայրապետյանի բողոքը ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 04.03.2014 թ-ի թիվ 250977 որոշման դեմ:

Ա/Ձ Սոնա Հայրապետյանի բողոքում բերված փաստարկները.

ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 17 փետրվարի 2014 թ-ի թիվ 2129322 ակտի (այսուհետ նաև Ակտ) համաձայն Ա/Ձ Սոնա Հայրապետյանը խախտել է «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջները, որի համար գանձման է առաջադրվել ընդամենը 94.500 դրամ:

28.02.2014 թ-ին Ա/Ձ Սոնա Հայրապետյանը ներկայացել է Արաբկիրի ՀՏ և պարզել, որ 64.250 դրամի գերավճարը Արաբկիրի ՀՏ կողմից ուղղվել է Ակտով առաջադրված պարտավորության մարմանը, որի արդյունքում գոյացել է նաև 30.250 դրամի պարտավորություն:

Արաբկիրի ՀՏ իրավունք չունի գերավճարի գումարը ուղղել Ակտով առաջադրված պարտավորության մարմանը, քանի որ ակտն դեռևս գտնվում է բողոքարկման փուլում:

Ա/Ձ Սոնա Հայրապետյանը խնդրում է վերադարձնել գերավճարը մինչև ակտի վերաբերյալ բողոքի մասին որոշում կայացնելը:

28.02.2014 թ-ին փոստային ծառայության միջոցով Ա/Ձ Սոնա Հայրապետյանը Արաբկիրի ՀՏ-ից ստացել է վարչական իրավախախտումների վերաբերյալ 27.02.2014 թ-ի արձանագրությունը, որով հայտնվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2 մասի պահանջները խախտելու վերաբերյալ:

Բողոքաբերը խնդրում է պարզաբանել, եթե Ակտն դեռևս գտնվում է բողոքարկման փուլում, ապա նա պետք է արդյոք վճարի «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2 մասով նախատեսված տուգանքը:

Ելնելով վերոգրյալից Ա/Ձ Սոնա Հայրապետյանը խնդրում է վերանայել տուգանքը սահմանելու մասին որոշումը և վերացնել այն:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները, եկավ եզրակացության, որ բողոքը ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Սոնա Հայրապետյանին «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2 մասով պատասխանատվության ենթարկելու համար հիմք է հանդիսացել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ 17.02.2014 թ-ի թիվ 2129322 ստուգման ակտը: Մասնավորապես, Ակտի 1-ին կետով արձանագրվել է, որ Ա/Ձ Սոնա Հայրապետյանը ք.Երևան, Կոմիտաս 54 153 տարածք հասցեում մատուցում է վարսավիրական ծառայություն թվով 1 աշխատատեղով, սակայն Արաբկիրի ՀՏ չի ներկայացրել 2013 թ-ի հուլիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսների համար

դիմում-հայտարարություն և չի ստացել արտոնագիր: Արդյունքում, 2013 թ-ի հուլիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսների համար դիմում-հայտարարությունը սահմանված ժամկետում չներկայացնելու համար ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 04.03.2014 թ-ի թիվ 250977 որոշմամբ (այսուհետ նաև որշում) կիրառվել է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2 մասով նախատեսված պատասխանատվության միջոցը՝ գումարով 20.000 դրամ:

Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում որոշումը կայացվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի համաձայն. «Վարչական տույժը կարող է նշանակվել իրավախախտումը կատարվելու օրվանից ոչ ուշ, քան երկու ամսվա ընթացքում, իսկ շարունակվող և տևող իրավախախտման դեպքում՝ այն բացահայտվելու օրվանից երկու ամսվա ընթացքում, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի»:

Քննարկվող դեպքում 2013 թ-ի հուլիս, օգոստոս և հոկտեմբեր ամիսների համար դիմում-հայտարարությունները Ա/Ձ Սոնա Հայրապետյանը պետք է ներկայացներ համապատասխանաբար մինչև 2013 թ-ի հուլիս 1-ը, օգոստոսի 1-ը և հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակաշրջանում: Այսինքն, Ա/Ձ Սոնա Հայրապետյանը վերոգրյալ իրավանորմով նախատեսված իրավախախտումը կատարել է համապատասխանաբար 2013 թ-ի հուլիս 1-ին, օգոստոսի 1-ին և հոկտեմբերի 1-ին:

Տվյալ դեպքում, հաշվի առնելով այն հանգամանքը, որ իրավախախտումը կատարվելու օրվանից անցել է ավելի քան երկու ամիս, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.1 հոդվածի 2 մասով նախատեսված տույժը ենթակա չէր նշանակման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ԿԱ ՊԵԿ Արաբկիրի ՀՏ պետի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ 04.03.2014 թ-ի թիվ 250977 որոշումը և կարճել գործը:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ